ԶՐԱԴԱՇՏԸ ԵՎ ԻՐ ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Անտիկ զրականության մեջ առասպելական ու կիսահեքիաթային անհատականություն ներկայացված Զրադաշտը Գաթերում հանդես է գալիս, որպես իրական պատմական դեմք:Զրադաշտ անունը ստուգաբանորեն կարող է նշանակել «ոսկեգույն ուղտեր ունեցող[1]»: Ըստ Աբանի «Զրադաշտը» թարգմանվում է «որպես ծեր ուղտեր ունեցող»,այդպես է մեկնաբանում նաև Իվան Ռակը, իսկ ամերիկացի գիտնական Ռիչարդ Ֆրայը այն բացատրում է որպես «նա ով քշում է ուղտերին»[2]: Ֆրանսիացի գիտնական Դյուշեն-Գիեմեն էլ համարում է, որ Զրադաաշտ անունը նշանակում է անձ, որը ունի «արժեքավոր կենդանիներ՝ ուղտեր[3]»: Հետևաբար, Զրադաշտը սովորական մարդու անուն է՝ զրկված սրբությունից և կասկածելի է այն փաստը, որ առասպելական ու աստվածացված անհատականությանը տային այդպիսի հասարակ անուն:

Ինքը զրադաշտը Գաթերում հանդես է գալիս նոր հավատի քարոզիչ,քուրմ, տառապող և պայքարող մարդ, Ավեստայի ավելի ուշ զրված մասերում խոսվում է այն մասին, որ նա ծագում է ոչ հարուստ Սպիտամա տոհմից, նա ամուսնացած է եղել և ունեցել է երկու դուստր: Գաթերում հիշատակվում է նաև այն մասին, որ Զրադաշտի կողմից իր երկրում քարոզվող կրոնը ընդունելություն չգտավ, ինչի հետևանքով վերջինս ստիպված եղավ փախչել՝ ապաստան գտնելով Վշտասպի մոտ. երկրներից մեկի կառավարիչ(kavi), որն էլ ոչ միայն հովանավորեց նրան, այլ նաև ընդունեց նոր հավատը[4]: Գաթերում ասված չէ, թե որտեղ է եղել Զրադաշտի հայրենիքը և ինչպես էր կոչվում Վիշապի երկիրը: Ժամանակի հետ Զրադաշտի ուսմունքը փոխանցվեց սերունդներին, տարածվեց նրա հետևորդների կողմից և ավելի լայն կիրառություն գտավ: Սակայն պատմական ավանդույթը շատ դեպքերում կորած էր, իսկ ժամանակագրությունը որպես այդպիսին դեռ գոյություն չուներ: Արդյունքում՝ առաջացել են տարբեր կարծիքներ մարգարեի ապրած կյանքի, ժամանակի, նրա հայրենիքի և ուսմունքի սկզբնական տարածման վայրի վերաբերյալ:

---

[1] Ի.Մ.Դյակոնով, История Мидии от древнейших времен до конца 4-го в.до н.э. М.1965с.385

[2] Р.Фрай, Наследие Ирана, М.1972с.50 В.И.Абаев, Скифский быт и реформа Зороастра <<Archiv orientalni>>, Praha 1965; Иван Рак, Мифи древнего Ирана, Ектб.2008с.18

[3] J.Duchesene-Guillemin, La religion de l Iran ancient. P.1962с.342

[4] История Ирана, М.1977с.38; М.А.Дандамаев; Б.Г.Луконин, Культура и экономика древнего Ирана, с.8-9

Համաձայն Ավեստայի ընթերցման, Զրադաշտը ծնվել է ավելի քան երեք հազար տարի առաջ: Բանը նրանում է, որ արևմուտքում առաջին անգամ Զրադաշը անունը հիշատակվում է Պլատոնի կողմից, որը ապրել է մ.թ.ա. 5-4-րդ դդ., այսինքն մոտավորապես 2.5 հազ տարի առաջ: Նա Զրադաշտի ծնունդը վերագրում էր 6 հազ. տարի առաջ իր ժամանակից: Հեշտ է հաշվել, որ 6 հազ. տարի Պլատոնից առաջ, մոտավորապես 9 հազ տարի է մեր օրերից: Հետևաբար մարգարեի ուսմունքը սկիզբ է առնում խոր հնությունից: Այդ տեսության կողմնակիցն է նաև Արիստոտելը:

Մակայն արդեն հաջորդ աղբյուրը հակադրվում է Պլատոնին, չնայած առաջ է բերում ոչ պակաս վստահություն, քանի որ դա Պյութագորասն է: Նա առաջին հույնն էր ու եվրոպացին, որ ծանոթացավ արևելյան մոգերի ուսմունքին: Իր ճանարհորդությունների ընթացքում նա այցելել է Բաբելոն, որտեղ զբաղվել է փիլիսոփայությամբ: Այնտեղ էլ համարվում է, որ նա ծանոթացել է Զրադաշտի հետ, որին շատ անգամներ է հանդիպել ու զրուցել: Հարկ է նշել, որ Պյութագորասը ապրել է մ.թ.ա. 6-րդ դարում: Ըստ եվրոպացի զրող Գրիգոր Բար Գեբրեմի կատարած հաշվարկների՝ Զրադաշտը ապրել է Կամբիզի օրոք՝ մ.թ. ա. 6-րդ դ. 2-րդ կեսին, իսկ Պյութագորասը մահացել է մ.թ.ա. 5-րդ դ. սկզբին, հետևաբար նրանք իսկապես ժամանակակիցներ են եղել և կարող էին հանդիպել: Այլապես, ինչպես զրադաշտական ուսմունքի հետ ծանոթությունը, անհնար է բացատրել անտիկ ավանդույթին հակադրվող պյութագորիզմը: Հակառակ հեթանոսական աստվածների պանթեոնի՝ այստեղ խոսքը գնում է միակ Աստծո մասին: Եվ եթե ճիշտ է այս հիփոթեզը, ապա մարգարեի կյանքի ժամանակը համապատասխանում է Ավեստայի հետ և աշխարհի պատմությանը թողնված է դեռ կես հազարամյակ: Սակայն կա վկայություն, որ Պլատոնը հանդիպել է Պյութագորասի աշակերտների հետ, նա նույնիսկ ձեռնարկել է երկար ճանապարհորդություն, որպեսզի ծանոթանա վերջինիս ուսմունքին: Հաշվի առնելով նրանց միջև ժամանակային տարբերությունը, ապա նա հանդիպել է արդեն ամենայն հավանականությամբ փիլիսոփայի աշակերտների աշակերտների հետ: Եվ եթե Պյութագորասը իրոք շփվել է Զրադաշտի հետ, ապա աշակերտները պետք է, որ հայտնեին այդ մասին Պլատոնին, նրանք չէին կարող մոռանալ այդպիսի կարևոր փաստի մասին իրենց ուսուցչի կյանքից: Սակայն Պլատոնը ոչ մի կերպ չի հիշատակում այդ իրադարձության մասին:

Ի դեպ արդեն Դարեհ 1-ի օրոք (5-րդ դար) զրադաշտականությունը ոչ միայն պաշտոնապես ընդունված էր ամբողջ Իրանում, այլև կրել էր զգալի փոփոխություններ: Եվ արդեն այդ ժամանակ Զրադաշտի ծննդյան տեղն ու ժամանակը միանշանակ չէր բացատրվում պարսիկների մոտ:

Զրադաշտական ավելի ուշ ավանդույթի համաձայն մարգարեի կյանքի ժամանակը որոշվում է մոտավորապես Մակեդոնացուց 3 հարյուր տարի առաջ: Ըստ այդ փաստարկների մարգարեի ապրած ժամանակաշրջանը համընկնում է մ.թ.ա. 7-րդ դարի վերջ 6-րդ դարի սկիզբ:

Հարկ է ուշադրություն դարձնել այն բանին, որ զրադաշտի քարոզներից երեք հարյուր տարի հետո, ինչպես երևում է հավաքվել է զրադաշտական գրքերի ամբողջ գրադարան՝ ներառյալ բացատրություններն ու մեկնաբանությունները:Սակայն պատմական փորձը ցույց է տալիս, հաշվի առնելով ոսկի գրերով, ճշգրտումներով ու լրացումներով գրված գրերը, որ նոր կրոնը պետք է ավելի հին լինի:

Զրադաշտի կյանքի ավելի վաղ թվագրմանն են պաշտպանում և լեզվաբանական ուսումնասիրությունները: Լեզուն, որով գրված է ռիգվեդան (մ.թ.ա. 15-րդ դար) և խոսվածքը, որով գրված է գաթերը, մոտեն: Անգամ ավեստական տեքստերն էլ ավելի հին են քան հինդկական (հնդուիստական) Վեդաները: Շատ կերպարներ, որոնց Վեդաները համարում են աստվածներ կամ հերոսներ, Ավեստայում պատկերված են որպես իրական պատմական անձեր:[5]

Իրականում Ալ. Մակեդոնացու արշավանքը անոտղելի վնաս պատճառեց ոչ միայն զրադաշտերին, այլ նաև պատմաբաններին: Եթե չայրվեին հին կտավները, ժամանակակից սպեկտրալ վերլուծությունը բավականին ճշգրտությամբ ցույց կտար, որ շրջանին է հետևում դասել պատմական փաստերը: Իսկ դա նշանակում է, որ մենք կարող էինք վստահաբար իմանալ, երբ է ապրել Զրադաշտը...

Զրադաշտի ապրած տարեթիվը հնարավեր չէ հստակ որոշել, քանի որ նա ապրել է իր ժողովրդի համար մինչ պատմական ժամանակաշրջանում: Գաթերի լեզուն արխայիկ է և մոտ է Ռիգվեդային, որի ստեղծումը վերաբերում է մ.թ.ա. 17-րդ դարից ուշ շրջանին: Ե վ Գաթերում, և Ռիգվեդայում մենք գտնում ենք աշխարհի մասին պատկերացումները, որոնք վերաբերում են հնադարին՝ քարեղարյան հասարակությունը՝ «Ավեստայի ժողովուրդը», ինչպես անվանում են ցեղերը, որից ծագում է ինքը Զրադաշտը, աղքատ էր և մեկուսացած մնացած աշխարհից և ոչ այդքան ուժգին ազդեցության է ենթարկվել բրոնզե դարի փոփոխություններին: Այսպիսով կարելի է միայն ենթադրել, որ Զրադաշտը ապրել է մ.թ.ա. 1500-1200 թթ. միջև[6]:

---

[5] В.В.Петров. 100 пророчеств Заратустры, М.2003,с.31-37

[6] Мери Бойс. Зороастрийцы, верования и обычаи, М.1987,с.26-27

Գաթերում Զրադաշտը իր մասին հիշատակում է, որպես zaotare, այսինքն լիիրավ հոգևորական, նա՝ կրոնի միակ հիմնադիրը, միաժամանակ եղել է և հոգևորական, և մարգարե:

Ժամանակակից գիտնականները շատ դեպքերում տարակարծիք են զրադաշտականության հայրենիքի և Զրադաշտի կյանքի ժամանակի հարցում: Տարբերակներից մեկի համաձայն, Զրադաշտը ապրել է Ալ. Մակեդոնացուց 258 տարի առաջ: Այդ թվականը հայտնի էր առաջին Սասանյանների օրոք, ինչպես նաև 10-11-րդ դդ. մահմեդական գիտնական ալ-Բիրունիին:[7] Զրադաշտի ժամանակաշրջանը հաշվելու համար օգտվում են հետևյալ փաստերից՝ Ալ. Մակեդոնացու կառավարման սկիզբը (մ.թ.ա. 336թ.), Իրանի նվաճումը վերջինիս կողմից (մ.թ.ա. 333), վերջին աքեմենյան արքա Դարեհ 3-րդի մահը (330թ.):[8] Չի բացառվում, որ մարգարեի կյանքի ժամանակի հաշվարկը գնում է այսպես կոչված Սելևկյան թվարկությունից, երբ Ալ. Մակեդոնացու մահից հետո նրա հետնորդները Արևելքում դարձան Սելևկյաները՝ գրավելով Ալեքսանդրի նախկին տերության հիմնական մասը Ասիայում:

Նման հաշվարկների հիման վրա անգլիացի հայտնի գիտնական Վ. Հենինգը առաջարկում է Զրադաշտի կյանքի թվագրության մի քանի հնարավոր տարբերակներ՝ 630-553, 628-551, 618-541թթ. մ.թ.ա.:[9] Հետևաբար Զրադաշտը այդ դեպքում կարող է ապրել մ.թ.ա. 7-րդ դարի 2-րդ կեսից 6-րդ դարի կեսերը: Հենց այդ ավանդության հիման վրա Ժ. Դյուշեն-Գիեմեն մարգարեի կյանքի շրջանը համարում է մ.թ.ա. 600թ. ոչ ուշ,[10] իսկ գերմանացի գիտնական Ալտհայմը զրադաշտի քարոզչության սկիզբը հասցնում է մ.թ.ա. 569թ.:[11] Ամերիկացի գիտնական Ռ. Ֆրայը, ելնելով Դարեհ 3-րդի մահվան թվից, համարում է, որ Զրադաշտի կյանքի ենթադրյալ շրջանը կարող է լինել մոտավորապես մ.թ.ա. 558թ. (330+228):[12] Բայց այդ բոլոր հաշվարկներն ու ենթադրությունները չեն տալիս այն հարցի պատասխանը, թե Զրադաշտի կյանքի ո՞ր շրջանն է հաշվի առնվում. նրա քարոզչության սկիզբը, Վշտասպի երկրում զրադաշտականության ընդունումը, թե մարգարեի մահը (ըստ ավանդության Զրադաշտը «ճշմարիտ» հավատով լցված

---

[7] Р.Фрай, Наследие Ирана, М.1972с52

[8] A.V.W.Jackson Zoroaster, the Prophet of Ancient Iran. N.Y.1899c.157. E. Herzfeld, Zoroaster and His World 4.1. Princeton,1947

[9] W.B.Henning, Zoroaster: Polician or Wich-Doctor. Ox,1951c.41

[10] J.Duchesene-Guillemin, La religion de l Iran ancient. P.1962 c137

[11] F.Altheim, Zarathustra und Alexander der Grosse. La parole del Passato. Napoli 1951c.329

[12] Р.Фрай, Наследие Ирана, М.1972с52

էր 30 տարեկանում, 42 տարեկանում քավի Վշտասպին դարձրեց իր հավատքից և մահացավ 77 տարեկանում)[13]:

Որոշ գիտնականներ, ինչպես Ի. Հերտելը, Ֆ. Քյոնինգը, Է. Հերցվելդը կարծիք են արտահայտել, որ Զրադաշտը եղել է Դարեհ 1-ինի ժամանակակիցը, որը կառավարել է 522-488թթ. մ.թ.ա.[14]: Գիտնականների մի ուրիշ խումբ էլ ենթադրում է, որ Զրադաշտը եղել է առաջին Աքեմենյանների ժամանակակիցը: Ըստ այդմ նշանակություն էր տրվում, որ Դարեհ 1-ինի հորը անվանել են Վշտասպ, ինչպես և մարգարեի հովանավորին: Գոյություն ունի կարծիք, որ դա միևնույն անձն է: Սակայն Աքեմենյանների մասին այլ պատմական փաստերը և Գաթերի ու Ավեստայի կոնկրետ վկայությունները Վշտասպի ու Զրադաշտի հարազատների ու շրջապատի մասին հակադրվում են այդ կարծիքին:

Այն մասին վարկածը, որ Զրադաշտը ապրել է Ալ. Մակեդոնացուց 258 տարի առաջ, ավելի շուտ զրկված է իրական պատմական հիմքերից, քանի որ արդեն Սասանյանների օրոք չկար ստույգ ժամանակագրական պատկերացում երկրի հնագույն պատմության մասին, և նրանց տեղը շատ դեպքերում զբաղեցնում էր վիպական ավանդույթը[15]: Բացի այդ էլ անգամ Աքեմենյանների օրոք բացակայում էր իրական պատկերացումը Զրադաշտի ապրած ժամանակի վերաբերյալ:

Որոշ անտիկ հեղինակներ գրել են, որ Զրադաշտը ապրել է 6 հազ. տարի առաջ: Սակայն այդ թվագրումը չունի կոնկրետ պատմական հիմքեր[16]: Այն հավանաբար կապված է չորս 3 հազարական ցիկլերի մասին իրանական պատկերացումների հետ, որոնցից մեկի սկիզբը նշանավորված է «ճշմարիտ« հավատով ավետված մարգարեի կողմից[17]: Սա վկայում է, որ Աքեմենյանների օրոք, հավանաբար, գոյություն չուներ ակնհայտ պատկերացում մարգարեի կյանքի ժամանակի մասին: Դա է պատճառը, որ շատ գիտնականներ, ինչպես առաջ, այնպես էլ ներկայումս հիմք են ընդունում ոչ թե ավանդույթը, այլև հիմնվում են «կոնկրետ» փաստերի վրա՝ հիմնականում Ավեստայի և Գաթերի նյութերի վրա: Այսպիսով, Զրադաշտը ապրել է Աքեմենյաներից շատ առաջ, բայց դրանով հանդերձ, տարբեր գիտնականներ առաջադարել են տարբեր տարեթվեր:

---

[13] И.М.Дьяконов, Восточный Иран до Кира,-История иранского госуцарства и культуры.К 2500-летию Иранского государства. М.1971с.138-140

[14] Э.А. Грантовский, Маги.-Историческая энциклопедия. т.8 М.1965с.885, J.Hertel Die Zeit Zoroasters,<<Indo-Iranische Quallen und Forschungen>> T.I.Lpz.1921c.5; F.W.König, Der Falsche Bardija,Dareius der Grosse und die Lügenkönie, Wien,1938c.237; E. Herzfeld, Zoroaster and his World. Prinecton,1947c1

[15] История Ирана, М.1977с.39

[16] Р.Фрай, Наследие Ирана, М.1972с52

[17] H.S.Nyborg. Die Religion des alten Iran. Lpz.1938c.28

Մ. Բոյսը հնարավոր է համարում թվագրել Զրադաշտի կյանքը մ.թ.ա. 1700-1500թթ. սահմաններում[18]: Է. Մայերը ենթադրում է, որ Զրադաշտի ուսմունքի քարոզչության սկիզբը կարելի է թվագրել մ.թ.ա. 1-ին հազ. սկզբին կամ մ.թ.ա. 11-10-րդ դդ.:Վիդենգրեն և Գրանտովսկին որոշում են Զրադաշտի կյանքի սահմանները 10-8-րդ դդ կամ 10/9-6-րդ.դ. սկիզբը ընկած ժամանակաշրջանում[19]: Գաֆուրովը համարում է, որ Զրադաշտը ապրել և քարոզել է ոչ ուշ քան մ.թ.ա. 8-րդ դարի վերջից 6-րդ դ. սկիզբը[20], իսկ Աբաևը թվագրում է այն 1-ին հազ. 1-ին կեսին[21]: Ի. Մ. Դիակոնովը ենթադրում է, որ Զրադաշտը ապրել է մ.թ.8-րդ դ ոչ ուշ: Որպես ապացույց նա բերում է հետևյալ փաստարկները՝ Ավեստայում չկա ոչ մի փաստ վկայող այն մասին, որ այն ձևավորվել է աքեմենյանների օրոք: Ավեստական նյութական մշակույթը արիայիկ է, այն չի ճանաչում խոշոր պետական կառույցներ, պետական կյանք, դրամական հարաբերություններ[22]:

Աքեմենյան կառավարիչների հետ կապված անունների բացակայությունը Ավեստայում, ինչպես նաև Արևմտյան Իրանի շրջանների, Պերսիդայի, Հունաստանի, Եգիպտոսի, Սիրիայի, Միջագետքի, Փոքր Ասիայի անվանումները հիմք են տալիս ենթադրելու, որ Գաթերը որպես Ավեստայի ամենահին հատված, հանդես են եկել մ.թ.ա. 6-րդ դ. շուտ, բանավոր փոխանցվել են քրմերին և գրվել Ավեստայի մյուս հատվածների հետ միասին նշանակալիորեն ավելի ուշ՝ Դարեհի թագավորության օրոք: Ամենայն հավանականությամբ Գաթերը ստեղծվել են կամ Արևելյան Մարաստանում 9-րդ դ. վերջին և 8-րդ սկզբին, կամ էլ, որ ավելի հավանական է, Միջին Ասիայում՝ խորեզմական տիրույթներում, Բակտրիայում մ.թ.ա. 6-րդ դ. ոչ ուշ: Դիակոնովը համարում է, որ ըստ իր ծագման Ավեստայի լեզուն պատկանում է կամ Միջին Ասիային և Իրանի արևելքին (ժամանակակից Իրան և Աֆղանստան) կամ էլ, եթե Մարաստանին, ապա միայն նրա արևելյան սահմաններին:

Վկայակոչելով Ավեստան և առաջին հերթին Գաթերը, որոնցից կարելի է վերցնել փաստեր Զրադաշտի կողմից կատարված կրոնական ռեֆորմների էության մասին, Աբաևը հանգում է այն եզրակացության, որ Գաթերի և Ավեստայի առանձին մասերը ստեղծվել են Արևելյան Իրանում՝

---

[18] M.Boyce. Zoroastrians.c2

[19] Э.А. Грантовский, Магия.-Историческая энциклопедия. т.8 М.1965с.885

[20] Б.Г.Гафуров, Таджики,с.50

[21] В.И.Абаев,Скифский быт и реформа Зороастра<<Archiv orientalni>> Praha 1965

[22] И.М.Дьяконов, Восточный Иран до Кира,-История иранского госуцарства и культуры.К 2500-летию Иранского государства. М.1971с.138-140